

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մաքսային սակագների քննութիւնը ապխտագում.— Մեծամասնութեան  
և փոքրամասնութեան պայքարը.— Ձեխերի և գերմանացիների անտագո-  
նիզմը.— Աւստրիայի և Ունգարիայի յարաբերութիւնները.— Վրոպայի մահը  
9 0 1 ս ի թ և ր թ և ր ի ց. Կիւիկիայի կաթողիսոսական ընտրութիւնը

Գերմանական ապխտագը այս անգամ իր նստաշրջանը  
սկսեց այնպիսի տեսարաններով, որ յիշեցնում էին աւստրիական  
ապխտարատի ծանօթ ազմկալի կռիւները, հայհոյանքն ու տուրու-  
ղմիտը: Մաքսային սակագների փոփոխութեան հարցը նոյն-  
քան զրգռեց սառնարիւն գերմանացիների կրքերը Բերլինում,  
որքան լեզուի վէճը չեխերին և համազերմանակահներին  
Վիէնայում: Չենք յիշում, խօսել ենք արդեօք մեր ընթերցող-  
ների հետ մաքսային սակագները փոփոխելու մասին, թէ  
ոչ, յամենայն դէպս, գուցէ, աւելորդ չը լինի այդ հարցի ծագու-  
մը պատկերացնել ընթերցողի առաջ:

Վիէնէմ II-րդը վիթխարի ծրագիր կազմելու սէր ունի.  
Նրա փայփայած իղձերից մէկն էլ այն է, որ Գերմանիան ու-  
նենայ հօր նաւատորմիդ, նա ցանկանում է նաև էլրա և  
Հոննոս գետերը միացնել մի ջրանցքով: Իր այդ ծրագիրները  
իրագործելու համար նա պէտք է գտնի ժողովրդի ներկայացու-  
ցիչների համաձայնութիւնը. ապխտագը պէտք է ընդունի  
բիւզժէտի մէջ այն ծախքերը, որ պահանջւում են կայսրի այդ  
ծրագիրները գլուխ բերելու համար: Վիէնէմը գիտէ, որ ազա-  
տական և արմատական կուսակցութիւնները դէմ կը լինեն՝  
ժողովրդի բեռը նոր հարկերով ծանրացնելու, մանաւանդ որ  
չեն էլ համակրում այդ ծրագրները. ուստի նա մտածեց իր  
կողմը գրաւել ապխտագի ամենաուժեղ տարրը՝ խոշոր կա-  
լուածատէրերին կամ ազդարներին, որոնց կողմնակից են ի-

բանց հիմնական աշխարհայեցողութեամբ նաև միւս պահպանողական կուսակցութիւնները (կոկերական, աշակերտական)։

Սակայն ագրարները լուկայներ սիրոյ համար այդպիսի քայլ անելու ընդունակ չէին. պէտք էր նրանց աշակերտներ գնել. ահա յօգուտ ագրարներին՝ մաքրային սակագների փոփոխութեան շարժումիքը։

Այդ օրինագծով գրքից Գերմանիա ներմուծուող գիւղատնտեսական բերքերի վրայ մաքուր աւելացնուած է մանուշակեղ գզալի փոփոխութիւն է մացնուած ներմուծուող հաստատիկների և անասունների սակագների մէջ. Ագրարները ուրախ էին. բայց որպէս զի գէթ կառավարութեան նախագծի մէջ նշանակած գներն անփոփոխ մնան—գիւմնային մի մանուկրի՛ իրանց դժգոհ էին ձեւացնուած այդ շնչին յաւելումներից։ Ռայխսաագի ազատական և արմատական պատգամաւորները, ինչպէս և հասարակական կարծիքը, արգիւնագործները, բու՛նուորները, արհեստաւորները, սաստիկ բողոքում էին այդ անարդար ծրագրի դէմ, որով ազգաբնակչութեան մի մասի շահերը զոհ էին բերուած միւս մասի ազահութեան։

Կառավարական օրինագծի առաջին ընթերցանութիւնից յետոյ, ռայխստագը ընտրեց մի յանձնաժողով մանրամասն քննելու համար իրան առաջարկուած փոփոխութիւնները մաքրային սակագների մէջ։ Սակայն այդ յանձնաժողովի մեծամասնութիւնը աւելի ագրարական դուրս եկաւ. քան իրանք ագրարները, մտանաժողովը համարեա բոլոր սակագները աւելի բարձր նշանակեց, քան կառավարական օրինագծի մէջ էր։ Այդպէս, ուրեմն, ագրարները, սպտուելով կառավարութեան օրինագծի տենդենցիայից, դժգոհ էին ձեւացնուած իրանց և աւելի մեծ պահանջներ անուած, որ վերջ ի վերջոյ գէթ անփոփոխ պահպանուեն կառավարութեան նշանակած սակագները։ Հետեւաբար, կառավարութիւնը և կալուածատէր ազնուականութիւնը, փակելով գրքի ագրարներին ներմուծումը ներքին շուկայի մէջ, այդ շուկայի կտտարեալ տէր էին դարձնում ագրարներին, որոնք, բնականաբար, աւելի թանկ էին ծախելու գիւղատնտեսական բոլոր արդիւնքները, ոչ մի երկիւղ չը կրելով գրքի մրցումից, այդպիսով, հողից կարուած մասսան ռազով գլխով յանձնուած էր այդ հողատէրերի կամայականութեան։ Բայց մտաւորապէս այդքան բարձր կանգնած մի աղզ, ինչպէս գերմանացին է, բութ և տգէտ անտարբերութեամբ չէր կարող վերաբերուել իր ամենաէական շահերը շօշափող այդ հարցին. մամուլի մէջ, հասարակական ժողովներում, ամեն տեղ քննադատուած էր օրինագիծը, մասնազէտ անտեսագէտները դասախօսութիւններ էին կարդում,

բազմակողմանի կերպով քննում էին հարցը և այլն։ Այդ բոլորից յետոյ զարմանալի չէ, թէ ինչ մեծ հետաքրքրութեամբ էր սպասում ամբողջ Գերմանիան ռայխստագի նիստերի նորոգմանն Ռայխստագում, երբ պարզուեց յանձնաժողովի ուլտրա-ազրարական կարծիքը, կառավարութիւնը սկզբում ցոյց տուեց, որ նա կը գերադասի բոլորովին հրաժարուել իր օրինագծից, քան ընդունել յանձնաժողովի արած յուսելումները, որովհետև իրագործել այդ չափազանց բարձր սակագները նա անկարող կը լինի թէ միջազգային և թէ ներքին պատճառներով։ Բայց բանից դուրս եկաւ, որ, անկախ ռայխստագից, կառավարութիւնը և ազրարները փոխադարձ զիջումներով համաձայնութեան են եկել և ամեն բան դրստել են և սարքել, ինչպէս հարկն է։ Այսպիսով, կառավարութիւնը իր հեռ ունէր մեծամասնութիւն — կենտրոնը, աջակողմեաններին և նացիօնալ-լիբերալներին։ Ընդդիմադիր կուսակցութիւնը մի փոքրամասնութիւն էր կազմում, բազկացած լինելով սօցիալ-դեմօկրատներից՝ և ազատ խորհողներից։

Ինչ անէր այդ պայմաններում փոքրամասնութիւնը, ինչ օրինական գէնը ունէր նա իր ձեռքում՝ մասսայի շահերի դէմ ուղղած օրինագծի իրագործումը խանգարելու համար։

Պարլամենտը մի միջոց է տալիս. դա օբստրուկցիան է։

Հիմնուելով ռայխստագի կանոնադրութեան այն կէտի վրայ, որով օրէնքի իւրաքանչիւր յօդուած նախ քան ընդունուելը պէտք է քննութեան և սպա քուէարկութեան ենթարկուի, օպպօզիցիայի համարեա իւրաքանչիւր անգամ սկսեց անվերջ ճառեր արտասանել օրինագծի ամեն մի յօդուածի մասին առանձին առանձին, իսկ յօդուածների թիւը այդ մաքսային սակագների օրինագծի մէջ մօտ 1000-ի է հասնում։ Բացի այդ, իւրաքանչիւր չնչին խնդրի առիթով պահանջում էին անուանական ձայնաւութիւն։

Այդ տակտիկայի նպատակն էր ձգձղել հարցը մինչև այն ժամանակ, երբ կը վերջանայ ներկայ ռայխստագի իրաւասութիւնը և նոր ընտրութիւններ կը նշանակուեն։ Իսկ թէ ինչ հետեւանքներ կունենային այդ ընտրութիւնները՝ պարզ է. ազգաբնակչութեան մեծամասնութիւնը, հակառակ լինելով օրինագծին, կուղարկէր ռայխստագը այնպիսի ներկայացուցիչներ, որոնք կարող են պաշտպանել մասսայի շահերը։ Այդ լաւ դիտէր, ի հարկէ, պահպանողական մեծամասնութիւնը, որ բոլոր երկրներում առհասարակ միջոցների մէջ խտրութիւն դնել չէ սիրում. երբ այդ իրանց ձեռնտու է, օրէնքն էլ կը փոխեն սեփական բացատրութիւն էլ կը տան։ Այդպէս էլ արուեց և

ներկայ դէպքում, պահպանողականներից մէկը, Կարգը-Քը, շանկարձ սպառազինայի համար բոլորովին անսպասելի մի յայտնութիւն արոււ.

—Նախ քան զիմնի սակագնի նիւթական մասի քննութեան,—ասաց նա նախագահ կամ Բալլետարներն,—ես թող կը տամ ինձ ձեր ուշադրութիւնը զարձնել այն բանի վրայ, որ մի քանի բողբոջի յետոյ պատգամաւորներին կը բաժանուի առիտաւարի երեք կուսակցութիւնների կողմից ստորագրուած ստաճարկը, որ յանձնարարուած է սակագների ընդունուելը ամբողջապէս, en bloc: Ապա, զիմնելով սոցիալ-դեմոկրատներին, նա աւելացրեց, ՎՊուք ի շար գործ զնելով պարլամենտական ձեւերը և ձեր յաւակնութեամբ՝ մեծամասնութեանս չիմբին կապելու փոքրամասնութեանց կամերը, մեզ այս նամակարձը ցոյց տուիք:

Տպագրութիւնը շանթահար էր և ցնցող փոքրամասնութեան կատաղութիւնը սահմանից անցաւ, երբ մեծամասնութիւնը նոյն իսկ չուզեց յետանգել այդ սպառէն ստաճարկի քննութիւնը մի օրով և միայն մի ժամ էր տալիս փոքրամասնութեան՝ ուշի գալու համար:

—Աւագակներ, դուք ուզում էք ձեր գրականները լքցնել ժողովրդի գրօններով: Սրիկաներ—ասաց սոցիալ-դեմոկրատներից մէկը զիմնելով պահպանողականներին:

Բարձրացաւ մի ազմկալի փոխորիկ, պատգամաւորներին տիրեց մի անդուսպ կատաղութիւն, կրքերը ձայրայեղորէն բորբոքուեցին:

Սոցիալ-դեմոկրատներից մէկն էլ, Չինգերը, զիմնելով ագրարներին, ի միջի այլոց, ասաց.

—Դուք այժմ բոլորովին հաննցիք ձեր զիմակը, ձեզ ինչ փոյթ ժողովրդի իրաւունքները, երբ կարելի է ժողովրդի հաշուով շահուել: Չեզնից չէր էլ կարելի սպասել յարգանք դէպի ուրիշների իրաւունքը, բայց ինչու դուք ձեզ ծիծաղելի էք զարձնում, ունակոխ անելով սեփական լիանոտագրութիւնը: Այդ ծիծաղելի է, սակայն աւելի ևս զարշնելու:

Աւելի հանցիտ կերպով էին խօսում միւս արմատականները և ցոյց էին տալիս, թէ որքան վտանգաւոր քայլ է պահպանողականների կողմից այդ փորձը՝ խախտել առիտաւարի սահմանագրական հիմքերը:

Մի քանի օր շարունակ առիտաւարի պատուին անվայել տեսարաններ էին տեղի ունենում, մի անգամ նախագահը նոյն իսկ ստիպուած եղաւ փակել ժողովը: Տեսնե՛ք ինչով կը

վերջանայ արդար փոքրամասնութեան և հանդամանքներից օգտուող մեծամասնութեան այս պայքարը:

Նման տեսարաններ տեղի ունեցան նաև աւստրիական ռալյաօրատում, ուր վերջին ժամանակները կարծես հանդարտուել էր չեխերի և գերմանացիների ազգային սուր անտաղօնիզմը, որի մասին մի քանի անգամ առիթ ենք ունեցել խօսել մեր տեսութեան մէջ դեռ ևս անցեալ տարի (№№ 3, 6, 12):

Եւրոպական ոչ մի տէրութեան մէջ այնպէս պարզ չի երևում լեզուի հիմնական նշանակութիւնը ազգերի գոյութեան կուում, ինչպէս Աւստրո-Ունգարիայում: Այդ ազգայնական պայքարը աւելի ազատ արտայայտութիւն ստացաւ 1867 թուականին ամբողջ ազգաբնակչութեան տուած սահմանադրական կարգերի չորհիւ Մենք տեսանք \*) թէ օրէնքով ինչ լայն սկզբունքների վրայ է դրուած լեզուների հարցը Աւստրիայում: Բայց իրականապէս այդ իրաւունքից կարողանում են օգտուել ոչ-գերմանացիները Աւստրիայում եւ ոչ-ունգարացիները Ունգարիայում միայն այն ժամանակ, երբ թուի և կազմակերպութեան որոշ ոյժ են ներկայացնում:

Աւստրիայում իսկապէս սլաւօնական տարրը (60,5%) գերակշռում է գերմանականից (35%) և եթէ այնուամենայնիւ գերմանացիներն են համարուում իշխող ազգութիւն—դա հետևանք է պատմական անցեալի, երբ սլաւօնական ազգերի մէջ ուժեղ չէր ազգային ինքնաճանաչութիւնը և ընդհանրապէս մտաւոր զարգացումը: Այժմ կարծես հասել է այն պատմական մօմենտը, երբ պէտք է վերջէ դնուի գերմանական գերիշխանութեան, եթէ ոչ ամբողջ Աւստրիայում, գէթ Չեխիայում, ուր ազգաբնակչութեան միայն 27—37% է գերմանական:

Չեխերի և գերմանացիների անտաղօնիզմը, ինչպէս յայտնի է, պատում է լեզուի հարցի շուրջ: Չեխերը պահանջում են որ Բօճենմիայում և Մօրաւիայում ոչ միայն զպրոցական, տեղային գործաւարական, այլ և պետական լեզուն լինի չեխերէնը:

Աւստրիական կառավարութիւնը գուցէ պատրաստ լինէր մեծ զիջումներ անել այդ ուղղութեամբ, եթէ համագերմանական կուսակցութիւնը այնքան զօրեղ կերպով ընդդիմադրութիւն չը ցոյց տար: Յայտնի է թէ այդ կուսակցութեան պարազլուի Շեներեր և Վօլֆ ինչ վայրենի տուրուգմիոցների և սկանդալների ասպարէզ դարձրին մի ժամանակ ռալյաօրատի նիստերը: Այժմ էլ համագերմանականների յանդիմութիւնը այնտեղ

\*) „Մուրճ“, 1901 թ. № 12, էր. 215:

է հասնում որ նրանք, զժգոն կառավարութեան զիջող սակարկալից, բզաւում են մինխար-նախագահի երեսին. ՎՄենք գերադասում ենք պատկանել Գերմանիային, քան այնպիսի Աւստրիային, որ տիրապետութիւնը պէտք է պատկանի սլաւոններին. կեցցեն Հոննցօյլերները:

Չեխերն էլ զժգոն են կառավարութիւնից, որ սա կարուկ սակարկալ չէ բանեցնում լեզուային չարքում:

—Եթէ կառավարութիւնը իրան անընդունակ է զգում անհրաժեշտ քայլերն անել լեզուի չարքում, նա պէտք է տեղ տայ ուրիշին. ասում են չեխերի պարագայութիւնը:

Այդպէս ահա մինխար-նախագահ կեորքերը ևս անկարող եղաւ հաշտեցնել երկու ներձակ կողմերը:

Ինչպէս Աւստրիայում տիրապետող գերմանական ազգութիւնը ունի սխերիմ հակառակորդ յանձին չեխերի, այնպէս և Ռուսարիայում տիրապետող մաջառները ունեն ընդդիմադիր ազգային հոսանք խորվաճաների կողմից, որոնց մտաւոր ազգային կենտրոնը Չագրէր բաղաքն է: Անչատուել և անկախ Մեծ-Պոր-փատրիս ստեղծել—ահա այդ սլաւոնական փորքիկ ազգութեան pia desideria-ն:

Բայց աւելի լուրջ և չիմնական է Աւստրո-Ռուսարական յարաբերութիւնների խնդիրը: Այդ երկու իրար հաւասարախրաւունք պետութիւնները, ինչպէս յայտնի է, 1867 թուականից յետոյ կապուած են մի համաձայնութեամբ (Ausgleich) որ երեքուն է, անհաստատ, զիրարեկի Ընդհանուր վեհապետ, ընդհանուր զօրք և նաւատորմից և ընդհանուր արտաքին մինխարութիւն—ահա չիման կէտերը: Բայց՝ այդ զինուորական-զինայտաօրական ընդհանուր-կէտերից կան ի հարկէ նաև անտեսական հանգոյցներ, սակայն այդ վերջին կապերը փոփոխելի են և այլայլի և պահանջում են ժամանակ առ ժամանակ նորոգութիւն: Տընտեսական կեանքին վերաբերեալ կողմերը—ընդհանուր մաքսային սխտեմ, ընդհանուր բանկ, միաձեւութիւն չափի, կշռի և դրամի մէջ, ինչպէս և երկու պետութիւններից ամեն մէկի մասնակցութեան չափը ընդհանուր ծախքերում—այդ բոլորը պէտք է իւրաքանչիւր 10 տարին մի անգամ քննուեն և ընդունուեն երկու երկրների պարլամենտներից ընտրուած պատգամաւորների կողմից: Այդպիսի համաձայնութիւն կայացել է առաջին անգամ 1867 թուականին, սպա նորոգուել են 1877 և 1887 թուականներին. իսկ 1897 թուականին համաձայնութիւնը չի կայացել և մինչև այժմ այդ խնդիրը լուծուած չէ և մի կերպ եօլա են տանում կայսերական ժամանակաւոր կարգադրութեամբ: Ուրեմն, կարող է պատահել որ կայսրութեան եր-

կու մասերի մէջ չի կայանայ համաձայնութիւն տնտեսական հոգի վրայ, և՛ մաքրային դաշնակցութիւնը, ընդհանուր բանկը և այլն խզուելով, մազից կախուած լինի նաև զինուորական-զիպ-լոմատիական միութիւնը...

Բոլոր պետութիւնների զինուորական-զիպլոմատիական շրջաններում անկասկած մեծ տպաւորութիւն է թողել ամբողջ աշխարհի գորքերին, բայի ֆրանսիականից, թնդանօթներ մատակարարող Կրուպպի մահը:

Հետագիւրը տարածեց նրա մահուան լուրը և այն անուանարկող պատմութիւնները, որ կապում են նրա վաղաժամ (48 տ.) մահուան, գուցէ և ինքնասպանութեան, հետ Գերմանական կայսրը իր ներկայութեամբ պատուեց իր «բարեկամի», թնդանօթային թագաւորի, թաղումը և ճառ արտասանեց նրա դագաղի վրայ:

Իսկապէս նշանաւոր անձնաւորութիւն էր Ֆրիդրիխ-Ալբրէխտ Կրուպպը, իբրև կազմակերպող աաղանդ և որոշ տեսակի բարեգործ իր բանուորների նկատմամբ: Լրագրներից \*) քաղում ենք հետեւեալ թուերը նրա էսսենեան գործարանների մասին:

Նրա գործարանները տարին բանեցնում են 120 միլ. պուղ ածուխ: Շոգեկաթսաները արտադրում են 43,500 հազար ձիու պո. գրանց աւելացրէք 370 էլէքտրո-մագնիսական շարժիչների վիթխարի ոյժը: Նրա էսսենեան գործարանները լուսաւորելու համար վառում են 11,000 էլէքտրական լամպեր: Միայն 1901 թուականին նրա գործարանից դուրս է եկել 40 հազար թնդանօթ: Նրա բանուորների թիւը հասնում էր 43 հազարի, իսկ հաշուած և գրանց ընտանիքները՝ 150 հազար հոգու: Կրուպպ իր բանուորների կեանքը ապահովելու համար տարեկան մտցնում էր 4 միլիօն. բացի այդ, բանուորների համար կենսաթոշակ էր հիմնել՝ նուիրելով իր կողմից 9 միլիօն: Իր բանուորների համար նա բնակարաններ էր շինել բոլոր յարմարութիւններով և մսխել էր այդ բանի վրայ 12 միլ.:

Կրուպպի տարեկան հատոյթը հասնում էր 15 միլիօնի: Այդ միլիօնները, ի հակէ, կազմում էին միլիտարիզմի բեռան տակ տնքող ազգերի արիւն քրտինքով աշխատած կուպէկներից:

25 նոյեմբ.

Լ. Ս.

\*) „Рус. Вѣд.“